ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Լ.Ասլանյան

«--01--» ----------09----------2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

6բ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Մարտիրոսյան Արգինե Գրիգորի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2023- 2024 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2023-2024 ուստարում 6բ դասարանը համալրվեց 2(երկու) նոր աշակերտով:Դասարանում սովորում են 34(երեսունչորս) աշակերտ՝20(քսան) տղա և 14 (տասնչորս) աղջիկ:Դասարանը կազմակերպված և համերաշխ է: Ունենք մի քանի գերակտիվ, գերաշխույժ տղաներ:Դասարանում ունենք մեկ ֆիզիկական խնդիր ունեցող աշակերտ՝Հովհաննիսյան Էդգար: Ունենք 1 (մեկ) ծնողազուրկ երեխա:Երեխաները ակտիվ են, միատարր և ընկերասեր: Դասարանում կան շատ շնորհալի աշակերտներ:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել այցելություններ եկեղեցիներ,պատմել ազգային ծեսերի մասին:Դաստիարակել արժանավոր, բարեպաշտ քրիստոնյա՝հոգով մաքուր և ամուր:

Գեղագիտական դաստիարակություն խնդիրները՝

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում:

Անհրաժեշտ է պարբերաբար կազմակերպել այցելություններ թանգարաններ, ցուցահանդեսներ և մշակույթի այլ օջախներ,սովորեցնել երեխաներին գնահատել հայ մշակույթային արժեքները և ազգային ավանդույթները: ----------

---

Ռազմահայրենասիրական դաստիարակություն խնդիրները՝

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ:Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Հաճախակի աշակերտների հետ անցկացնել հայրենասիրության թեմայով զրույցներ, դաստիարակել ազգին, հայրենիքին նվիրյալներ,կազմակերպել էքսկուրսիաներ զորամասեր, ծանոթացնել աշակերտներին զենքերի հետ, սովորեցնել ինքնաձիգը քանդել- հավաքել, կրակել դպրոցում առկա սարքի վրա:

Ֆիզիկական դաստիարակություն խնդիրները՝

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում: Իրականացնել սպորտային խաղեր,անցկացնել զրույցներ ֆիզիկական պատրաստվածության կարևորության, առողջ մարմին ունենալու հնարների մասին: Առաջնորդվել <<Առողջ մարմնում՝ առողջ հոգի>>կարգախոսով:

Աշխատանքային դաստիարակություն խնդիրները՝

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Աշակերտների մեջ դաստիարակել հարգանք ցանկացած աշխատանքի նկատմամբ, ձևավորել հասարակական աշխատանքներին ակտիվություն ցուցաբերելու ձգտում,հաճախակի կազմակերպել շաբաթօրյակներ, դասասենյակների մաքրություն,բույսերի խնամք: Մեր արթնացնել արհեստների նկատմամբ, հարգել և գնահատել ցանկացած աշխատանք:

Բնապահպանական դաստիարակություն խնդիրները՝

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում:

Անցկացնել զրույցներ բնության և մարդու միջև կապի մասին, հորդորել պահպանել բնությունը, սիրել կենդանաբանական և բուսական աշխարհը: Կազմակերպել այցելություններ կենդանաբանական և բուսաբանական այգիներ, մաքուր պահել շրջապատը, մասնակցել շաբաթօրյակներին:

Դպրոց-ընտանիք կապը

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց -ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:Ամրապնդել ուսուցիչ-աշակերտ-ծնող-դպրոց համագործակցությունը,ակնկալել ծնողների ակտիվ մասնակցությունը և աջակցությունը դպրոցում իրականացվող միջոցառումներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Չորեքշաբթի	7-րդ	Չորեքշաբթի	7-րդ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	<<Ողջու՛յն,դպրոց,ողջու՛յն գիտելիք>>	06.09.23թ	Կատարվել է
II	<<Ինչպես օգնել մարդկանց>>	13.09.23թ	Կատարվել է
III	Անկախության օր: Ընթերցել բանաստեղծություններ, քառյակներ՝ նվիրված Հայաստանի անկախությանը:	20.09.23թ	Կատարվել է
IV	<<Ընտանեկան ավանդույթներ>>	27.09.23թ	Կատարվել է
V	Ոիսիցչի օր: <<Ոիսուցիչը աշակերտի օգնականն է և ընկերը>> թեմայով զրույց:	04.10.23թ	Կատարվել է
VI	Աղքատության դեմ պայքարի միջազգային օրվան նվիրված զրույց	11.10.23թ	Կատարվել է

	<<Բարեգործություն և հոգատարություն>> թեմայով:		
VII	Այցելություն <<Էրեբունի>> թանգարան:	18.10.23թ	Կատարվել է
VIII	<<Իմ ռեժիմը տանը և դպրոցում>>:	01.11.23թ	Կատարվել է
IX	<<Խոսք ես տվել, կատարի՛ր>>	08.11.23թ	Կատարվել է
X	Զրույց <<Հայրենիք, ես մի զարկն եմ քո բազկի>>	15.11.23թ	Կատարվել է
XI	<<Հայոց լեզուն հազարագանձ>> թեմայի շուրջ ծավալում, բանաստեղծությունների ընթերցում:	22.11.23թ	Կատարվել է
XII	Զրույց <<Մարդիկ, որոնց կուզեի ես նմանվել>>:	29.11.23թ	Կատարվել է
XIII	Երկրաշարժի զոհերի հիշատակի օրվան նվիրված զրույց:	06.12.23թ	Կատարվել է
XIV	1-ին կիսամյակի ամփոփում:	13.12.23թ	Կատարվել է
XV	<<Ուրախ դիմավորենք Ամանորը>>;	20.12.23թ	Կատարվել է
XVI	Կազմակերպչական հարցեր:	10.01.24թ	
XVII	<<Կարողանանք լսել միմյանց>>:	17.01.24թ	
XVIII	Զրույց <<Հայոց հզոր բանակ>>թեմայով:	24.01.24թ	
XIX	<<Մեր հերոս նախնիները>>;	31.01.24թ	
XX	Կոնֆլիկտային իրավիճակների քննարկումներ, լուծումներ	07.02.24թ	
XXI	Օրը սկսենք <<բարև>>-ով:	14.02.24թ	
XXII	Սպորտի դերը մեր կյանքում:	21.02.24թ	
XXIII	Զրույց <<Իսկական ընկերը>> թեմայով:	28.02.24թ	
XXIV	Կանանց միջազգային օր: Կանանց նվիրված բանաստեղծությունների ընթերցում:	06.03.24թ	
XXV	Նկարում ենք միասին:	13.03.24թ	
XXVI	<<Փրկենք երկինք մոլորակը>>:	20.03.24թ	

XXVII	<<Մոր կերպարը>> թեմայով զրույց:	03.04.24թ	
XXVIII	Այցելություն Կ.Ստանի-սլավսկու անվան դրամատիկական թատրոն:	10.04.24թ	
XXIX	Հայտնի մարդկանց կյանքի պատմությունները:	17.04.24թ	
XXX	Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր:	25.04.24թ	
XXXI	Զրույց <<Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն>> թեմայով:	02.05.24թ	
XXXII	Ճանապարհային երթևեկությունների կանոններ:	08.05.24թ	
XXXIII	Ուսումնական տարվա ձեռքբերումներ:	15.05.24թ	
XXXIV	Տարեվերջյան ամփոփում:	22.05.24թ	